Սարտակի օգնութեամբ ետ է ստանում, սոյա հետ գնում է Մոնղոլիա, շատ հայ իշխանների օգնում ևն ևն։ Ջալալը նշանաւոր է և իւր երկրից դուրս բարեգործական հաստատութիւններով իւր կին Մամքանի հետ, որ Հաղբատայ Զարեհ իշխանի [1] *քոյրն էր։*

Չնայելով որ Ջալալը մակդիր է. «Բայց այդ մակդիրը այնպէ՛ս է կպել Հասանին, որ աւելի յաճախ միայն այդ անունով է կոչւում է առանց բուն անուան, հաւանօրէն բաւական բազմաթիւ այլ Հասանների հետ չշփոթելու համար» (էջ 411) ասում է Օրբէլին։ Մենք պիտի աւելացնենք և այն, որ չնայելով այսօր էլ այդ ցեղի ազգանունը Հասան—Ջալալեան է, անշուշտ մեր Հասան—Ջալալի անունով, սովորաբար միայն Ջալալեան է կոչւում։

Արդ այս Ջալալի հայր Վախտանկ Տոնկիկը մի զարմանալի ձի պիտի ունեցած լինի։ Վրաց տարեգիրները պատմում են, որ Թամարա թագուհու մարդը՝ Դաւիթ Սոսլանը, Զագամի ճակատամարտին, Շամքորի մօտ, նստել էր մի ձիու վրայ, որ գնել էր Վախտանգ Խաչենացուց, ոչ աւել և ոչ պակաս քան մի բերդ և մի գիւղ վճարելով (էջ 407)։

Խնդիրն այն չէ, թէ որքան պատմական է այս դէպքը, այն էլ բաւական է, որ ժամանակի մատենագիրներ հաւատացել են և հաղորդում են. կարելի է ուրեմն երևակայել, թէ ինչպիսի չափազանցութիւններով այդ ձիու գովքը կը հնչւէր Հայոց աշ-

---

1. Հասան Ջալալ Դոլայի եւ իւր տոհմի մասին տեղեկութիւնները մենք քաղում ենք I. A. Орбели, Гасанъ Джалалъ. князь Хаченскій (Извѣстія Императорской Академіи Наукъ, էջ 405—456 С-Петерб. 1909) սիրուն աշխատութիւնից։ Հեղինակը բնելով մի ժողովրդական աւանդութիւն. որով այս Զարեհը դառնում է ժամանակակից Աշոտ Ողորմածին (Ոսկանեանց Երզնկեանց. Հնախօսական Տեղագր. Հաղբատայ. էջ 92—97. Վաղարշապատ 1886. Արտատպ. Արարատ Ամսագրից) եւ անճնարին համարելով այդպիսի կոպիտ սխալ մի կեղծած գրաւոր աղբիւրում. կասկածում է եւ աւանդութեան խելութեան վրայ (էջ 415. ծանօթ. 4)։ Մենք յամենայն դէպս մի բան կարող ենք ճշտտապէս ասել ի պաշտպանութիւն Երզնկեանի. որ նա այս աւանդութիւնը ճաւանօրէն քաղել է Տփխիսի «Արարատ լրագրի 1850. Հ. 6. էջ 81—84. Հ. 7. էջ 104—107. Հ. 9. էջ 124—135 «Արդար դատաստան Աշոտոյ Հայոց Թագաւորի» **անանուագիր** պատմուածքից, որի նիւթը, ճիշդ ինչպէս միեւնոյն լրագրի 1851 Թուականի Հ. 18, էջ 278—282 «Հնարագիտութիւն Սմբատ Հայոց Թագաւորի կնոջ՝ Մարիամ Թագուհւոյ» պատմուածքը, անպայման ժողովրդական է (Հմտ. Էմինեան Ազգագր. Ժողովածու. Դ. § 11 «Դտածուրիկ փարէն» էջ 89—92)։ Բայց թէ ո՛վ է գրի առել կամ շարադրել, մնում է անյայտ։